# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է Մ.Խորենացի 3, 7 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀԿԱ-ՊԵԿ-ԲԸՀԾՁԲ-16.3 ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի արդյունքում 2017թ-ի փետրվարի 20-ին կնքված պայմանագրում 2017թ-ի մարտի 30-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ : ***Ֆինանսական միջոցների հատկացում***:

Փոփոխության նկարագրություն: ***Կողմերը համաձայնագրով հաստատել են ծառայության ուժի մեջ մտնելը՝ Պայմանագրի 7.1 համաձայն:***

Փոփոխության հիմնավորում: ***Փոփոխությունը կատարվել է ՀՀ կառավարության 10/02/2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգով սահմանված պայմաններին համապատասխան՝ Պայմանգրի 7.3 կետի համաձայն:***

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ***Հենրիկ Ղարիբյան***:

Հեռախոս՝ ***060-544-709***:

Էլ. փոստ՝ ***h.gharibyan0@mail.ru*** :

Պատվիրատու՝ ***ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե***:

**Համաձայնագիր 1**
**20.02.2017թ. կնքված N ՀՀԿԱ-ՊԵԿ-ԲԸՀԾՁԲ-16.3 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխությունների կատարելու մասին**

ք.Երևան «30» « Նոյեմբերի » 2017թ.

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի մի կողմից, և «Քլիներս» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության տնօրեն Գ.Պապիկյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 20.02.2017թ. կնքված N ՀՀԿԱ-ՊԵԿ-ԲԸՀԾՁԲ-16.3 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի 7.1 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի /կցվում է/:

1.2 Սահմանել, որ Պատվիրատուն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված մատուցված ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ քան 2017 թվականի դեկտեմբերի 25-ը:

1.3 Պայմանագրի թիվ 1 հավելվածով հաստատված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում ծառայությունների մատուցման ժամկետը սահմանել՝ համաձայնգիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 304-րդ օրացույցային օրը և համաձայնագրի պայմանները տարածել պայմանագրի կնքման օրվանից՝ 2017 թվականի փետրվարի 20-ից փաստացի ծագած հարաբերությունների վրա:

## 2.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն պայմանգրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով 2 /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ և ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013202016, Հ/Հ 900013574018
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար

Ա.Սահակյան ______________
/ստորագրություն/
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Քլիներս» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց պող., 34/3 շենք
«ԱմերիաԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570018464821OO
ՀՎՀՀ 00130286
տնօրեն՝

Գ.Պապիկյան ______________
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված
Հաստատված է 20.02.2017թ. կնքված
ՀՀԿԱ-ՊԵԿ-ԲԸՀԾՁԲ-16.3 ծածկագրով
գնման պայմանագրի փոփոխությամբ

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը * | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ԿԱ ՊԵԿ 2017թ. արտաբյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | մարտ | ապրիլ | մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Մինչև 2017 թ. դեկտեմբերի 25-ը | Ընդամենը Տարի |
| 4239 | Մքրման ծառայությունների | 10 000 000 | 14 622 000 | 19 244 000 | 23 866 000 | 28 488 000 | 33 110 000 | 37 733 000 | 42 355 000 | 46 977 000 | **51 600 000** | **51 600 000** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013202016, Հ/Հ 900013574018
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար

**Ա.Սահակյան** ____________________
/ստորագրություն/
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«Քլիներս» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց պող., 34/3 շենք
«ԱմերիաԲանկ» ՓԲԸ
Հ/Հ 157001846482100
ՀՎՀՀ 00130286
տնօրեն՝

**Գ.Պապիկյան** ____________________
/ստորագրություն/
Կ.Տ.